



“Table Football IT Cup”

8-ը մայիսի 2013թ.

Հարգելի գործընկերներ,

“Ձեռնարկությունների ինկուբատոր” հիմնադրամը, “Մեգասպորտ” ՓԲԸ-ն և “Մոբայլ լուծումների ԵԿԱ տարածաշրջանային լաբորատորիան” հրավիրում են ձեզ մասնակցելու սեղանի ֆուտբոլի “Table Football IT Cup” մեկօրյա գարնանային առաջնությանը:



Առաջնությունը կանցկացվի օլիպմիական համակարգով՝ պարտվողը դուրս է մնում մրցաշարից:

Առաջնությանը կարող են մասնակցել SS ոլորտի կազմակերպությունները ներկայացնող 16 թիմ:

Յուրաքանչյուր թիմ պետք է բաղկացած լինի առնվազն 2, իսկ առավելագույնը 4 անձից /2 հիմնական և 2 պահեստային խաղացող/՝ առանց տարիքային սահմանափակման:

Բոլոր խաղացողները պետք է գրանցված լինեն իրենց թիմը ներկայացնող SS կազմակերպությունում: Յուրաքանչյուր կազմակերպությունից կարող է մասնակցել մեկ թիմ:

- I, II և III տեղերը զբաղեցրած թիմերը կստանան գավաթներ,
- I տեղը զբաղեցրած թիմը կստանա նվեր՝ **Ֆուտբոլի սեղան**,
- բոլոր մասնակիցներին կտրամադրվի 15% գեղջ՝ “Մեգասպորտ”-ից ֆուտբոլի սեղան ձեռք բերելու համար:

Առաջնությունը կմեկնարկի 2013թ. մայիսի 8-ին, ժ17:00-ին, Երևանի Մաթեմատիկական Մեթոնաների Գիտահետազոտական Ինստիտուտի (Մերգեյան) «Երևան Էքսպո» ցուցահանդեսային համալիրում (հասցեն՝ ք.Երևան, Հ.Հակոբյան 3):

Առաջնության անցկացման համար անհրաժեշտ պարագաները և մրցավարներին կապահովի “Մեգասպորտ” ընկերությունը:

Առաջնության մասնակցության հայտերն /ըստ կցված ձևի/ անհրաժեշտ է ներկայացնել “Ձեռնարկությունների ինկուբատոր” հիմնադրամ, info@eif.am էլեկտրոնային փոստի հասցեով, մինչև 2013թ. ապրիլի 26-ը, ժ. 18:00:

Նամակի վերնագրում խնդրում ենք նշել **“Table Football IT Cup” Application:**

Լրացուցիչ հարցերի համար զանգահարել 010-219717 հեռախոսահամարով:

Խոստանում ենք Ձեզ ուրախ ժամանց և մաղթում հաղթանակ:

